

Այլ չասէր՝ կաց դու բարեաւ .
 Նա հուզ մատչել մանաւանդ՝
 Թըւէր թևեալ աստ և անդ՝
 Մինչ ընդ քըւաւ խոյակին
 Խնաւ նըստէր լուսամտին ,
 Ընդ երկեղին վորոսկրեայն
 Զծաւիւն հընչէր լըռելէայն .
 Պարանոցիկն ընդ ցըքնաղ
 Ուռուցեալ երգ և ծիծաղ .
 Եւ հանդարտիկ անմըռունչ
 Կայր դադարէր ՚ի մի քունջ :
 Արդ ասեմ, ժամ է համբոյժ .
 Թաշկինակաւս իմ հանդուշ
 Մատչիմ մատամբք ՚ի յերէր ,
 Յոյս , մի յամօթ զիս առներ :
 Ո՛հ , թ' էր ոք անդ զիս դիտել,
 Զաշխարհ ՚ի վարմն ոսկեթել
 Ասէր , համբոյժն ըմբռունէ .
 Այնքան տենչ կիրթ զայր առնէ :
 Իսկ աստ . . . աւաղ զիս աւաղ .
 Յոյս իմ մընաց անսըւաղ .
 Զվարմն ածի քաջ իսկ ճարտար ,
 Խիզչ իմ թողու զիս արդար .
 Բայց ազդ հաւուց չարաշձիք
 Որսորդափաստը են , ճար չիք .
 Քան զամէն ջանս իմ հարուստ
 Ժիր նա գըտաւ ՚ի փախուստ .
 Ես մինչ յափիկս որոնեմ
 Նա զգագաթամբա օդաձեմ
 Տայ թե թեթե ՚ի թըռիչ
 Եւ հեղ ծաւիւն մ' ի քըպիջ .
 Եւ զոյս իմ յօդ սին հանել
 Անկաւ ՚ի բանս սիրս անել .
 Պատրշգամին առ ՚ի չեղ
 Խոսորեցաւ ՚ի գեղգեղ .
 Ազատ ըլսոյն գեղգեղէ
 Մինչ ես որսոյս որս եղէ .
 Զհեա յիմարեալ հաշմ որսորդ
 Հատկըլեալ չունչ ՚ի սոսորդ
 Վարկպարազի չուրջ բոլոր
 Ծրջիմ աղիքս ՚ի յոլոր ,
 Խընդրեմ զձայնիկն այն ՚ի զուր ,
 Զոսկեղինիկն ըզիետուր :
 Ծաւիւն ծաւիւն դըռնչէ
 Յունկն իմ , այլ յոյս ոչ հընչէ :
 Թաշկինակաւ սուտ ցանցոյս
 Կալեալ զաշացս արտասուս ,
 Նըստիմ ՚ի վայր գլխակոր
 Երբու զիեկեալ մի սափոր
 Յայն ինչ հանել զըուր անձուկ
 Որ ոչ բուժեաց ըզպասուք :
 Այլ մինչ ցաւոց եմ գերի
 Տակաւին սիրս իմ բերի
 Ուր բերան իզք անժաման .
 Կարծեմ թէ գայ թըռչունն այն :
 Թէ տայ ճընճըռկ ճըռուողիւն ,
 Ասեմ , Անա իմ ծաւիւն .
 Ճանձիկ բըզզէ յապիկին ,
 Ասեմ , Զայնիկ գեղձանին .
 Յառնեմ ընդուստ , և ընդ օդ
 Թըռչոյս լինիմ հետազտ .
 Մինչև յաթոռ զոր լըքի
 Դառնամ սուդ դառն ՚ի յոդի :

Ի գիւր սրափս աղեկէզ
 Ուն գեղ ըղչիս կանիսատիս
 Հեղի զգէպ սեաւ սոփեստիս
 Ձեզ որ լըսողք էք խրատիս .
 Մի ձըգէք ձեռս ՚ի թըռչուն
 Որ ՚ի յերկինս դիտէ զըուն .
 Մի յամենայն ՚ի վայելս
 Ջըգտել կամ մօտ մատչել ես .
 Եւ մի աս ըղչից հակամէտ
 Յանձեռնիհասն իշնել գէտ :
 Յանակընկալ բարւոյ տենչ
 Ջըւառ գործին շատք ՚ի ձէնջ .
 Դեղ գեղձանկիս ձեզ ՚ի փորձ ,
 Մի կըրկնեսցէ ոք զիմ գործ :

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

Լ աւ բժիշկ ընտրելու համար շատ

Փորձ ու հասկըցողութիւն պէտք է :
 Պէտք չէ մէկ բժիշկը մէկալէն վեր
 դնել՝ միայն անոր երիտասարդութեա-
 նը կամ միայն ծերութեանը համար .
 Փորձառութիւնը շատ անդամ հասա-
 կին տեղը կը լեցընէ : Դարձեալ ինչ-
 պէս որ պէտք չէ բարքը գէշ ու թե-
 թեամիտ բժիշկ մը ընտրել , նոյնպէս
 պէտք չէ ան պատճառաւ ընտրել , որ
 սիրելի է ամենուն , քղքվար և ճանչւոր
 է : Ը ատ խելացի ու խորունկ թա-
 փանցող բժիշկներ ալ կան . բայց աս
 իրենց մտաւորական կարողութիւննե-
 րը բանի չեն գար , երբոր ետեւէ ըըլան
 իրենց արհեստին մէջ կատարեալ հը-
 մուտ ու փորձ ըլլալու :

Ուրեմն ան բժիշկը պէտք է ընտրել
 որ զուրիշը իրեն վրայ կը վստահացը-
 նէ . վասն զի հիւանդութեան գլխա-
 ւոր գեղերէն մէկը աս վստահութիւնն
 է : Ինական է որ մէկը վստահ ըըլար
 ան բժիշկն վրայ որ հիւանդին երա-
 կը կը շօշափէ առանց ուշադրութեան ,
 ու խելքը միտքը ուրիշ բաներու տա-
 լով . որ շուտով ու անհօդութեամբ
 երակը շօշափելէն ետեւ այնպիսի գու-
 շակութիւններ կ'ընէ , որ հակառակ
 կ'ելլեն հիւանդութեանը , կամ թէ
 գեղերուն նուսխան շուտ մը կը գրէ՝
 նաև առանց նախ հիւանդը քննելու :